

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ (ԿԱՆԽԱՎՃԱՐԻ) ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Ապահովագրվում է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) հիփոթեքային վարկավորման շրջանակներում Ձեր հիփոթեքային պարտավորությունը (կանխավճարը):



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ա.Ավետիսյան 116/1, 116/5
Հեռ.՝ (+374 10) 500 010
Կայք՝ www.imnairi.am



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ

Ապահովագրական պատահար է համարվում վարկառուի կողմից վարկային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում գրավադրված գույքի բռնագանձման և իրացման արդյունքում գոյացած միջոցների հաշվին վարկառուի՝ Բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների ոչ ամբողջական մարումը:

ԻՆՉՆ Է ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ

Բանկի հիփոթեքային վարկավորման շրջանակներում Ձեր կողմից վճարման ենթակա կանխավճարը (հիփոթեքային պարտավորությունը)՝ Բանկի կողմից սահմանված պարտադիր վճարման ենթակա կանխավճարի և Ձեր կողմից փաստացի վճարված կանխավճարի դրական տարբերության չափով:



ՈՐՔԱՆ Է ՀՀԱՏՈՒՅՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ

Չհատուցվող գումար չի կիրառվում:



ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ապահովագրության պայմաններին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ խորհրդի թիվ 48 որոշմամբ 25.07.2025թ հաստատված «Կանխավճարի ապահովագրության» պայմաններում այցելելով ապահովագրական ընկերության պաշտոնական կայքը:



ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության վկայագիրը կնքվում/ վերակնքվում է 1 տարով մինչև այն պահը, երբ վարկի հետագա մարումների արդյունքում վարկի մայր գումար/գրավի արժեք հարաբերակցությունը երկրորդային շուկայից անշարժ գույք ձեռք բերելու դեպքում կազմում է 70%, իսկ առաջնային շուկայի դեպքում՝ 80%:



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ

Ապահովագրական գումարը հիփոթեքային պարտավորության մասով վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափն է, որը վարկային պայմանագրով սահմանված կանխավճարի և Ձեր կողմից կատարված կանխավճարի տարբերությունն է՝ համաձայն Ձեր վարկային պայմանագրի:



ԻՆՉ ՔԱՅԼԵՐ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԶԵՌՆԱՐԿԵԼ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Պատահարի դեպքում և ապահովագրական հատուցում ստանալու համար բոլոր անհրաժեշտ գործողությունները կատարում է Բանկը:

ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ

Ապահովագրավճարը շեղնից գանձվում է ամսական կտրվածքով՝ համաձայն վարկային պայմանագրին կից ժամանակացույցի: Տարեկան ապահովագրավճարը կազմում է ապահովագրական գումարի 1.8%-ը:

ՈՐ ԴԵՊՔԵՐԸ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ

Հատուցման ենթակա չեն այն վնասները, որոնք առաջացել են հետևյալի արդյունքում.

- Գրավադրված և կառուցման մեջ գտնվող անշարժ գույքի բացակայության շինարարությունը չավարտելու կամ կառուցապատողի սնանկացման պատճառով,
- Վարկի չմարման կամ ոչ պատշաճ մարման հետևանքով առաջացած տույժերը, տուգանքները, կոմիսիոն վճարները և պարտադիր այլ վճարները,
- Ապահովագրական պատահարի տեղի ունենալուն ուղղված՝ Վարկառուի հակաօրինական կանխամտածված գործողությունների կամ անգործության,
- Ապահովագրական պատահարի տեղի ունենալու ժամանակ անհրաժեշտ փաստաթղթերի սահմանված ժամկետներում չներկայացման կամ թերի ներկայացման և այլ դեպքերի/իրավիճակների, որոնք մանրամասն ներկայացված են ապահովագրական ընկերության պաշտոնական կայքում,
- «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍԴԸ 25.07.2025թ. Խորհրդի նիստի թիվ 48 որոշմամբ հաստատված «Կանխավճարի ապահովագրության» պայմաններում սահմանված այլ դեպքերում:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

Հիփոթեքային պարտավորության (կանխավճարի) ապահովագրությամբ հատուցման ենթակա չեն գույքին հասցված վնասները: